

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԻ ԵՒ ՀԱՅԱՏՅԱՑ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր լեզու, այդ թվում և հայերենը (մասնավորապես բառապաշարը, դարձվածային կազմը և առածանին), յուրատեսակ մի շտեմարան է, որն ամբարում է լեզվակիր ժողովրդի աշխարհընկալումն ու փորձը, կենցաղը, մշակույթը, սովորույթներն ու ավանդույթները, հավատալիքները, պատմությունն ու հոգեբանությունը, հարաբերություններն այլ ժողովուրդների հետ, նույնիսկ ազգի կենսունակությունն ու գալիքին ուղղված նրա հայացքը: Այսպիսով, լեզուն յուրատեսակ կուտակիչ է: Կուտակչականը լեզվի կարևոր գործառույթներից մեկն է (ի շարս մյուս՝ հաղորդակցական, անվանողական, արտահայտչական գործառույթների)¹:

Հայերենի բառապաշարը ցարդ քննվել է տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, ժամանակագրության, կազմության, իմաստային դաշտերի, գործածականության, գործառական արժեքի, հուզարտահայտչական երանգավորման և այլն:

Հայերենի բառապաշարի շատ իրողություններ, սակայն, տակավին կարոտ են ուսումնասիրության, հատկապես նորովի լուսարանմամբ: Մենք ձեռնամուխ ենք եղել հայերեն այն բառերի քննությանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլում են հայ ժողովրդի պատմության առանցքային իրողություններ և իրադարձություններ (կամ դրանց արձագանքն են), այլ կերպ ասած՝ փորձում ենք բացահայտել հայոց պատմության և հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը հայերենի բառապաշարում²: Այդ բառերը միաժամանակ հայոց պատմության տար-

¹ Հմմտ. Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2009, էջ 6-7:

² Տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն արտացոլող մի բառախմբի մասին (հայաբաղաբ, հայավան, հայազյուղ, հայաթաղ, հայազաղութ), «Էջմիածին» համալեն, 2015, Բ., էջ 46-66:

բեր շրջանների եւ իրադարձությունների վերաբերյալ յուրատեսակ հաղորդիչներն են³:

Հազարամյակների պատմության ընթացքում հայերն ունեցել են դաշնակիցներ ու բարեկամներ, սակայն ավելի շատ՝ հակառակորդներ ու թշնամիներ: Հայոց լեզվում կազմվել եւ գործածվել են բառեր, որոնց միջոցով արտահայտվել է օտարների դրական կամ բացասական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Այդ բառերը, որպես կանոն, մտնում են *հայ* արմատի բառակազմական փնջի մեջ:

Դրական վերաբերմունք արտահայտող բառերից են՝ *հայամեծար*, *հայամեղ*, *հայանպաստ*, *հայանվեր*, *հայաշահ*, *հայապաշտ*, *հայապաշտպան*, *հայասեր* եւ այլն, բացասական վերաբերմունք արտահայտողներից՝ *հակահայ*, *հայադավ*, *հայագրկում*, *հայաթափ*, *հայակեր*, *հայակործան*, *հայակոյ*, *հայահալած*, *հայամերժ*, *հայանասիար*, *հայանենգ*, *հայապաշտ/հայապաշտություն*, *հայամասա*, *հայապոյաց*: Վերջիններս ակնհայտորեն գերազանցում են դրական վերաբերմունքի ցուցիչ բառերին: Այս բառերը, ի դեպ, հսկայական տեղեկատվություն են պարունակում ոչ միայն հայոց պատմությունից, այլեւ հոգեբանական որոշակի ազդակներ են հաղորդում:

Այս անգամ քննության առարկա ենք դարձրել հիշյալ կարգի բառերից ընդամենը երկուսը՝ *հայասեր* եւ *հայապոյաց*: Ընտրությունը պատահական չէ. *հայասեր*-ը դրական վերաբերմունք արտահայտող բառերի խմբի (բառաիմաստային խմբի կամ իմաստային դաշտի) միջուկային միավորն է, իսկ *հայապոյաց*-ը, որ առաջինի հականիշն է, բացասական վերաբերմունք դրսևորող բառերի խմբի կենտրոնական միավորն է:

Նախ անդրադառնանք դրական վերաբերմունք դրսևորող *հայասեր* բառին: Թեկուզ այն բանի համար, որ դրական վերաբերմունքի արտահայտիչ է, երկրորդ՝ այսպես կոչված «վերաբերմունքային» բառերի մեջ ժամանակագրորեն առաջինն է կազմվել, երրորդ՝ առավել հաճախական է եւ այլն:

Հայասեր բառն առաջին անգամ գրանցվել է Նոր հայկազյան բառարանում՝ «Որ սիրէ զհայս կամ զազգս հայոց» բացատրությամբ, որպես ածական եւ «Մեռաւ քաջն եւ յոյժ հայասերն» եւ «Հայասեր լինել» բնագրային վկայակոչումներով Վարդան պատմիչից⁴: Բնականաբար հայտնվել է

³ Հմմտ. «Ժամանակակից հասարակությունների մշակութային մակարդակի վրա մարդիկ, սկզբունքորեն, բառը դիտում են որպես առարկայի մասին ինֆորմացիայի հաղորդիչ» (Գ. Ա. Բրուտյան, Փիլիսոփայություն եւ լեզու, Երևան, 1972, էջ 99):

⁴ Հ. Գ. Անտիբեան, հ. Խ. Սիւրմելեան, հ. Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լե-

նաև Առձեռն բառարանում «Հայոս ազգին վրայ սէր ունեցող» բացատրությամբ⁵: Այս բառը, սակայն, չի ընդգրկվել գրաբարի նորագույն բառարանում⁶ ամենայն հավանականությամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդան Արեւելցին ԺԳ. դարի հեղինակ է: Եւ քանի որ այդ դարը միջին հայերենի գործառության շրջանի մեջ է մտնում, *հայասէր*-ը տեղ է գտել միջին հայերենի բառարանում⁷: Անգամ այս պարագայում *հայասէր*-ը ժամանակագրական առումով առաջինն է հայերի նկատմամբ վերաբերմունք դրսևորող բառախմբում:

Բառը կազմվել է «արմատ+հոդակապ+արմատ» հիմնակաղապարով, որ սերում է «մաքուր» հիմքերով բարդություններ, ինչպես՝ *ազապահուս, գիշերապահ, տրեւաթափ, վնասաբեր*: Գործառական բեռնվածության տեսակետից Ե. դարի հայերենում բառաբարդման կաղապարների մեջ սա բացարձակ գերակշռություն ունի⁸: «Գոյական+հոդակապ+բայարմատ» կաղապարով, մասնավորապես *սէր* վերջնաբաղադրիչով են կազմվել գրաբարյան հետևյալ բառերը՝ *ասպրոսածասէր, աղքատասէր, ազգասէր, օլարասէր, յունասէր*, տարբեր ենթակաղապարներով՝ *ստաքինասէր, կենասէր, ընտանասէր, քրիստոսասէր* եւ այլն⁹: Այսինքն՝ բառակազմորեն *հայասէր*-ը սերտորեն աղերսվում է ոսկեդարյան բառակազմական կաղապարին. նրա կազմության ժամանակ անշուշտ որոշակի դեր է խաղացել նաև նմանակության օրենքը:

Հայասէր-ը հանդիպում է ԺԹ. դարի հայերեն թարգմանական տարբեր բառարաններում: Այսպես (ներկայացնում ենք ժամանակագրական

գուի, հ. Բ., Վենետիկ, 1837, էջ 30:

⁵ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 468:

⁶ Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, Երևան, 2000:

⁷ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 402: Ուշագրավ է, որ Վարդան Արեւելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատության արեւելահայերեն թարգմանիչ Գ. Բ. Թոսունյանը գրքի ներածության մեջ գրում է. «Նա իր գործերի մի մասը շարադրել է զուտ դասական գրաբարով, ինչպես՝ «Հաւաքումն պատմութեան»-ը («Տիեզերական պատմութիւնը»), մեկնությունները, ներբողները, ճառերը, շարականները, իսկ որոշ գործեր էլ («Ժողանքը», գրույցները եւ այլն)՝ միջին հայերենով» (տե՛ս Վարդան Արեւելցի, Պատմութիւն տիեզերական, Երևան, 2001, էջ 15): Ի դեպ, գրքի խմբագիրը վերոհիշյալ բառարանների հեղինակ է *հայասէր*-ը միջինհայերենյան կազմություն համարող Ռ. Ս. Ղազարյանն է:

⁸ Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 95:

⁹ Հ. Գ. Աւետիքեան, հ. Խ. Միւրմէլեան, հ. Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. հ. Ա., Բ., Վենետիկ, 1836-1837: Առհասարակ բայարմատ վերջնաբաղադրիչով այսպիսի բարդությունները մեկնաբանվում են խնդրային հարաբերության միջոցով, ինչպես՝ *քրիստոսասէր* - «Բրիստոսին սիրող. աստվածասեր», ապա նոր «բարեպաշտ քրիստոնյա»:

կարգով). **հայասէր** «որ սիրէ գՀայս կամ զազգս Հայոց» - Armeno'filo; amatore della nazio'ne armena¹⁰, **հայասէր** - αρμενόφιλος¹¹, **հայասէր** - fond of Armenians, philarmene, **հայասիրութիւն** - philarmenia¹², **հայասէր** - qui aime les Arméniens, philarmène, **հայասիրութիւն** - philarménie¹³, **հայասէր** - армянофилъ, **հայասիրական** - армянофильскій, **հայասիրութիւն** - армянофильство¹⁴, **հայասէր** - philarmène, **հայասիրութիւն** - philarménie¹⁵: Ուստի զարմանալի է այն փաստը, որ *հայասէր*-ը, նրանից կազմված *հայասիրութիւն* եւ *հայասիրական* բառերը բացակայում են հայերենի կարեւոր որոշ բառարանների բառացանկից¹⁶:

Հայերենի նոր շրջանի բացատրական բառարանները *հայասէր* բառը¹⁷ բացատրում են այսպես. «Հայերին սիրող»¹⁸, «Հայերին սիրող, հայերին լավ վերաբերվող»¹⁹ «1. Հայերին սիրող, 2. Հայերի նկատմամբ սիրուց կատարված՝ տեղի ունեցած»²⁰, «հայերը սիրող՝ գնահատող»²¹, միայն որպես ածական: Նկատելի է, որ բառի իմաստային կառուցվածքում «հայերին սիրող» իմույթը պարտադիր բաղադրիչ է, որ ըխում է անմիջական կազմիչների շարահյուսական հարաբերությունից:

Հետաքրքրական է, որ ներկայացված ոչ մի բացատրության մեջ չկա այն, ինչ սպասելի էր, եւ որը տեսնում ենք բառարաններից մեկում. «Հա-

¹⁰ Հ. Մանուէլ վարդապետ Ջախջախեան, Բաղկիրք հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 829:

¹¹ Տ. Ի. Խ. Զօլագեան, Նոր բառարան հայերէնէ յունարէն, Կ. Պոլիս, 1868, էջ 142:

¹² Հայր Սատաթիա վարդապետ Պետրոսեան, Նոր բաղկիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, 1875, էջ 377:

¹³ Գ. Ա. Նար Պէյ Լուսինեան, Բաղկիրք հայ-գաղղիարէն, Փարիզ, 1881, էջ 516:

¹⁴ Կ. Եղորեան, Հայերէն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 221: Այստեղ *հայասէր*-ը նշվում է միայն իբրեւ գոյական:

¹⁵ Կոմիտաս Ա Ոսկեան, Առձեռն բառագիրք հայերէն-գաղղիերէն, Կ. Պոլիս, 1893, էջ 408:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910: Այս բառարանում *հայ* սկզբնաբաղադրիչով արձանագրված միայն երկու բառ կա՝ *հայաբարբառ* եւ *հայադասան*: Մի՞թե՛ սա քաղաքական ենթատեքստ ունի (միաժամանակ, սակայն, նկատենք, որ վերոհիշյալ թարգմանական բառարաններից երկուսը պոլսական, իհարկե՛ ավելի վաղ, հրատարակություններ են):

¹⁷ Բառարանային գրանցում ունի նաեւ համանուն *հայասէր*-ը, որ բացատրվում է այսպես՝ «հայից սերված, հայածին, հայ» (Ե. Գևորգյան, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևան, 1978, էջ 202-203): Սրանց երկրորդ բաղադրիչները տարբեր ծագում ունեն՝ *սիրեց* եւ *սերեց*:

¹⁸ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 37: Նույնը՝ «հայերը սիրող» ձեռակերպմամբ այստեղ՝ Գնել արք. Ճէրճեան, Փ. Կ. Տոնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Պէյրութ, 1992, էջ 1137:

¹⁹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Երևան, 1974, էջ 281:

²⁰ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

²¹ Անդրանիկ վրդ. Կոսեան, Բաղկիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, էջ 236:

յերը յարգող *օրաբուսական*»²² (ընդգծումը մերն է - Դ.Գ.)²³: Հարկ ենք համարում ասել, որ թեպետ այսպիսի բացատրությունը համապատասխանում է գոյականի արժեքին, այնուամենայնիվ բառարանում կրկին նշված է ածականի (միայն ածականի) արժեքը:

Առաջին կիրառությունների դեպքում բառը գործածվել է հենց օտարների կապակցությամբ: Ահա հայկազյան բառարանի երկու վկայակոչումների փոքր-ինչ ընդարձակ հատվածները Վարդան Արեւելցու «Հաւաքումն պատմութեան» («Տիեզերական պատմութիւն») երկից. «Ի սոյն թուականի փոխի առ Քրիստոս պատկաւորն մեր Լեւոն, եւ սոնոս զթագն դուարբ նորաւ միամօր, Եղիաքեթ անուն, որ ըստ Ֆոանգաց լեզուին Զապիլ կոչի, ածեսպ նմա այր զՖիլիպն զորդի տեսուն Անուարքու, զամա երկու. եւ զի սարելի էր նմա ազգս Հայոց, եւ զիսն մանասանդ պարտէր զՖոանգան, երդմասգանց եղեսպ 'ի յեղեսպ ուխտէն հայադասան եւ **հայասէր** լինել, վասն որոյ եւ զպարտական թագն եւ զպաղարն առաքէր 'ի տուն հօր իւրոյ» (գլուխ ԶԴ.): «Ի հինգհարիւր ինասուն եւ չորս թուին Զանգի ամիրայն էստ զՏոռաս. եւ զկնի երկուց ամաց էստ զնա Զօւլինն, որ էր տէր նորա. եւ զկնի եօթանասուն աւոր սպանաւ 'ի Թուրքաց, որք եկին վերստին առին զքաղաքն, եւ մնոաւ քաջն եւ յոյժ **հայասէրն**. որում արար ողբս Գէորգ վարդապետն, որ հայրն էր խոստովանութեան նորա» (գլուխ ՀԳ.):

Այժմ փորձենք պարզել, թե **հայասէր** բառն աշխարհաբարում ինչ բաների հետ է կապակցվում: Ըստ ԱՐԵՎԱԿ-ի²⁴ տվյալների (այստեղ **հայասէր** բառույթը հանդիպում է 188 համատեքստում)՝ **հայասէր**-ին կապակցվող բառերը հետաքրքրական պատկեր են ներկայացնում: Ուշագրավ է նաեւ խոսքային այն միջավայրը, որտեղ հանդես է գալիս հետազոտվող բառը:

Հայասէր բառն իբրեւ ածական գործածվում է անձ նշանակող գոյականների հետ (հասարակ եւ հատուկ), ինչպես՝ «ԱՄՆ-ի **հայասէր նախագահ** Ու. Ուիլսոնը հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողություն հաստատելու առաջարկով 1920 թ. հանդես էր եկել երկրի Կոնգրեսի առջև» («Ազգ», 04.07.2003): «Ոմանք օրվա

²² Արտ. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968, էջ 407: Հեղինակներից երկուսը 1992-ի բառարանը կազմողներից են, սակայն այս բառի դեպքում բացատրությունը, ինչպես տեսանք, հետագայում փոխվել է:

²³ Այսուհետև բոլոր ընդգծումները մերն են:

²⁴ Տես Արեւելահայերենի ազգային կորպուս (www.eanc.net) լեզվաբանական որոնողական համակարգը, որից մեծապես օգտվել ենք բնագրային համապատասխան օրինակներ բաղելիս:

թերթերն են կարդում... ու վիճում միացյալ անկախ Հայաստանի մասին, որ հայերին տալիս է մեծ **հայասեր Վ. Վիլսոնը**» (Հ. Մկրտչյան, «Մի հայի պատմություն»):

Հայասեր բառի զարմանալի եւ բացառիկ գործածության ենք հանդիպում դասական արձակագիր Պ. Պոռոչյանի «Կովածաղիկ» վեպում: Այստեղ հայասեր է դարձել Հիսուս Քրիստոսը. «...իսկ Արագածի գլխին է մեր սուրբ Լուսավորչի աղոթալուծին, որպեսզի, ասում են, մինչեւ այսօր մի կանթեղն անպարան կախված է մշտավառ եւ անընդհատ եւ հիշեցնում է **հայասեր Միածինն** յուր սիրելի Գրիգորի ձեռնամուծ այս կանթեղի տակից հայոց աշխարհի համար օրերով թափած արքայապետները»:

Հայասեր-ը գործածվում է նաեւ բացասական՝ «կեղծ հայասեր», նույնիսկ հակառակ՝ «հայատյաց» նշանակությամբ, սակայն միայն չակերտներում: Այսպես. «Միջոցը միեւնույնն էր. հրավիրում էին մի քանի **«հայասեր»** հոնկորներ - Ժոռես, Պրեսանես, Պելլուրան, Պիեր Բիար...» (Շիրվանզադե, «Կյանքի բովից»): «...ազգային օջախի ֆորպոսարի կարգավիճակը աստիճանաբար ուղղվում է ինչ-որ տերիտորիայի (ինչպես **«հայասեր»** Զարուկինի նման տակնաքներն են արտահայտվում) վերածելուն...» («Հայկական ժամանակ», 18.11.2008):

Ոճական ուշագրավ կիրառություն է Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում վանեցի խանութպանի այս բնութագիրը. «**Կայրաղի հայասեր** է Հաջի Մանուկոֆ էֆենդին, ինչպես իրեն սիրում է հորջորջել հենց ինքը՝ այդ **հայրնի հայասերը**»: **Կայրաղի** բառի գործածությունը **հայասեր**-ի հետ անսովոր է եւ ծառայում է վերելուն հիշված «կեղծ հայասեր» նշանակությունը դրսևորելու համար, սակայն հեգնական, անարգական երանգավորմամբ:

Փաստերը ցույց են տալիս, որ հայասեր են կոչվել սովորաբար օտարները: Սակայն բառի մի շարք գործածություններ, ինչպես վերը տեսանք, վկայում են, որ այն կարող է վերաբերել նաեւ հայերի: Իսկ ովքեր են նրանք: Հայեր, որոնք ապրում են հայրենիքում եւ հայրենիքից դուրս, նշանավոր են կամ ոչ: Այսպես. «**Մ՛՛ջ ասաքեն այսչափ անհավաստներին ուղղության վերածողը հայասեր պարվելի Կիրակոսն էր**» (Պ. Պոռոչյան, «Սկիզբն երկանց»): «Եթե Արա Աբրահամյանի նման հայասեր գործիչներ շատ լինեին Ռուսաստանում, պարկերը կիռիավեր տեղի ազգային միջավայրում» («Ազգ», 27.07.2005): «...գեղարվեստական ղեկավարն էր հայասեր եւ ազգանվեր կինոգործիչ, մեծանուն ռեժիսոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Հ. Մայլանը» («Ազգ», 19.09.2006): Մեր կարծիքով այս բառի նման գործածությունն արդարացված չէ²⁵:

Հայասեր բառով կարող են բնութագրվել ոչ միայն մարդիկ, այլև հասարակական շրջանակներ, պետություններ, նրանց քաղաքականությունը, այսինքն՝ ոչ անձինք, իրանիշ գոյականներ: Օրինակներ՝ «Միյուոքի երբեմնի «մայրաքաղաք» Բեյրութում ապրիլի 24-ը համընդհանուր սուգ էր հայության և Լիբանանի **հայասեր** արաբ շրջանակների համար» («Ազգ», 27.04.2006): «...հայանպասար ու **հայասեր քաղաքականությունը** ջերմ արձագանք ու հավանություն էր գրել փխրուն տիկնոջ հոգում» («Ազգ», 24.06.2003): «Ֆյորենցիայում կազմակերպում է իդրական **հայասեր մի կոմիտե**» («Ազգ», 05.02.2005): «Կար ժամանակ, երբ հայերը, աչքը Ֆրանսիայի բերանին, նրանից էին ապաստում իրենց ազատությունը և «միակ **հայասեր**» պետություն էին համարում» (Լեո Կամսար, «Կարմիր օրեր»): Գործածվում է նաև պետության անվան հետ: Օրինակ՝ «Նույնիսկ **հայասեր Ֆրանսիայի** իշխանության մարմիններում 2000-01 թթ. ոմանք զգուշացրել էին, որ ցեղասպանության ճանաչմանը թուրքիան կարող է պատասխանել առեւտրական պատժամիջոցներով» («Ազգ», 08.06.2003):

Այս դեպքում էլ բացասական երանգավորում ունի բառի չակերտավոր կիրառությունը՝ «...**«հայասեր»**, «քրիստոնեասեր» Երուզան, միսիոներական կազմակերպություններ սրելով Արեւմտյան Հայաստանում, խարխում էր հայ ժողովրդի հոգևոր միասնությունը» (www.akunq.net/am/?p=30509):

Հեզնական երանգավորում ունի նաև **հույժ հայասեր** անսովոր բառակապակցությունը (հմմտ. չարենցյան **կալադի հայրենասեր**-ի հետ). «...այդ **հույժ հայասեր** երկրի ներկայացուցիչները զգուշացրել են գաղտնի պահել իրենց անունը» (www.armtimes.com/hy/read/58710):

Հայասեր բառի կապակցելիական առանձնահատկություններից է այն, որ հաճախ **մեծ** լրացումն է ստանում: Մենք այնքան քիչ բարեկամներ ենք

²⁵ Այս առիթով արժե հիշել հետևյալ դեպքը: 1928-ին Բերիո թեմի առաջնորդարանը Քարեն Եփիեի հայանպաստ գործունեության 25-ամյակն է նշում Ազգային Հայկազյան մանկապարտեզի սրահում: Ճառախոսները դրվատում են դանիացի օրիորդի հայասիրությունը և հայությանը մատուցած ծառայությունները: Մեծ բարերարուհուն նվիրված գրքում կարդում ենք. «Քարեն Եփիե շտրիակալութեան իր խօսքին մէջ կը բողոքէ իրեն ուղղուած «հայասեր» որակումին դէմ, կ'արտահայտէ վիրավորանքը արոր համար ու կ'ըսէ.

- **Հայր հայասեր չի կրնար ըլլա, այլ՝ ազգասեր**: Ես ազգասեր հայ մըն եմ և ինչ որ կարարած եմ ու կը կարարեմ ազգասիրական մղումով կ'ընեմ ու ոչ արժանի, ուրեմն, արդարայրտում երախտագիտական զգացումներուն» (Յ. Չոլաքեան, Քարեն Եփիե: Հայ գողգոթային և վերածնունդին հետ, Հալեպ, 2001, էջ 137-138):

ունեցել, որ հայության խնդիրներով հետաքրքրված (և հետաքրքրվող) պետական, քաղաքական գործիչներին, հոգևորականներին, գիտնականներին և մտավորականներին առհասարակ, հայերի նկատմամբ ջերմ, մարդկային վերաբերմունք, հոգածություն դրսևորած մարդկանց *հայասեր* բառով բնութագրելիս առանց երկմտելու նրանից առաջ դնում ենք *մեծ* ածականը: Եւ *մեծ հայասեր* բառակապակցությունը հաճախադեպ է, հիմնականում արդարացված: Օրինակներ՝ «*մեծ հայասեր Լորդ Բրայս*» («Հայրենիքի ձայն», 11.11.1987), «*մեծ հայասեր Յոհաննես Լեփսիուս*» («Ազգ», 12.12.2003), «*մեծ հայասեր Ֆրանց Վերֆել*» («Առավոտ», 11.11.2004), «...ի դեպ, այս *մեծ հայասերի* մասին այս րարի պարբերականում եւս մեկ ուշագրավ աշխատանք՝ «Արմին Վեգներ. Յեղասպանության լուսանկարիչ» վավերագրական ֆիլմը» («Ազգ», 16.12.2005), «*մեծ հայասեր Ֆրիդրիխ Նանսեն*» («Առավոտ», 16.08.2007), «*Էստոնացի մեծ հայասեր Հեդվիգ Բյուլ*» («Ազգ», 28.05.2005)²⁶ եւ այլն:

Այս մեծարումն անշուշտ միայն սակավաթիվ բարեկամներ ունենալու հանգամանքով չի բացատրվում, այլև հայերի կողմից դրսևորվող երախտագիտության զգացումի²⁷: Հմմտ. «*Մենք ազգովին հարգանքի երկրպա-*

²⁶ Ջարմանայի է, սակայն, որ «մեծ» ածականով մեծարված որոշ գործիչների անուններ քաջածանոթ չեն հայ հանրությանը, ունանց անունները չկան «Հայկական սովետական հանրագիտարանում»:

Ծանոթանանք հետեյալ տեղեկատվությանը. «Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Նորվեգիայի հայ համայնքից, Օս քաղաքի քաղաքական համայնքապետն կկայանա *մեծ հայասեր* եւ մարդասեր, նորվեգացի միսիոներ Բուդիլ Բյորնի մասին «Ինձ կոչում են մայրիկ» փաստաթուղթագրական ֆիլմի ցուցադրությունը» (<http://armenpress.am/arm/news/716415/>): Կամ «Անցած րարվա մայիսին նորվեգական Քրագերո քաղաքի կենտրոնական հրապարակում կանգնեցվեց նորվեգացի միսիոներ եւ *մեծ հայասեր Քաթարինա Բուդիլի դիմաքանդակ-հուշարձանը*» («Ազգ», 18.08.2005):

Հիշյալ մոտեցումը մասամբ հաղթահարվել է Հեդվիգ Բյուլի պարագայում. նրա մասին հոդված է գետնվել «Հայկական համառոտ հանրագիտարանում» (տե՛ս հ. 1, Երեւան, 1990, էջ 542): Պարզ է, որ *մեծ* պատվանունը տեղին է: Ահա Բյուլի գործունեության համառոտ ուրվագիծը. Ադանայի 1909-ի ջարդերից հետո Բյուլը մեկնել է Կիլիկիա եւ նվիրվել հայ որբերի կրթությանն ու դաստիարակությանը: Բարեգործական եռանդուն գործունեություն է ծավալել հատկապես Մեծ եղեռնի տարիներին եւ նրանից հետո. 1922-ին Հայեպոմ հայ գաղթականների համար բացել է հիվանդանոց, երեխաների համար՝ հայկական դպրոցներ, հիմնել ջուլիականոց, որտեղ աշխատել են 500 հայ կանայք եւ աղջիկներ: Հայերը նրան պարգևատրեցին *միսս Բյուլ մայրիկ* էին անվանում

²⁷ Մեկ օրինակ միայն: Երախտագետ հայերը 1947-ին Հայեպոմ հիմնված ազգային ճեմարանը կոչել են դանիացի հայասեր բարերարուհու՝ Քարեն Եփիեի (1876, Յուտլանդիա, Դանիա-1935, Հայեպ) անունով (արեւելահայերեն գրավոր խոսքում հանդիպում է նաեւ Կարեն Եպյե ձեռով): Կանգնեցվել է հայերին իր կյանքը նվիրած օրհորդի հիշատակը հավերժացնող հուշաքար՝ «Հայերի մայրը» մակագրությամբ: Քարեն Եփիեի գերեզմանի հողով սափոր է փոխադրվել Երեւան եւ գետնվել Հայոց ցեղասպանության հուշահամալիրի Հիշատակի պատի մեջ (Ծիծեռնակաբերդում):

գոյություն ունինք մաքրուցանելու Ալֆրեդ Տերմենին՝ նախ իբրև հայասերի և հետո իբրև մարդասերի» (Վ. Թորթվենց, «Ալֆրեդ Տերմեն»):

Որոշ դեպքերում **մեծ հայասեր**-ը՝ իբրև լեզվական կառույց, մամուլի լեզվին բնորոշ կաղապարայնության դրսևորում կարելի է համարել²⁸: Հմմտ. «...սարոն Խորենի գլխավորելում Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի մեծադիր նկարն է, որ **հաճախ տպում են մեր թերթերը «Մեծ հայասերը» մակագրությամբ**» (Հ. Մկրտչյան, «Մի հայի պատմություն»):

Մամուլի լեզվին բնորոշ այս բառակապակցությունը գործածվում է նաև հրապարակագրության, ինչպես և գեղարվեստական ու գիտական գրականության մեջ: Այսպես՝ «**Մեծ հայասեր Ֆրանսի այս խոսքերը վերաբերում էին դեռևս քսանհինգամյա երիտասարդի այդ օրվա դասախոսությանը միայն**» (Ս. Կապուտիկյան, «Հրապարակագրություն»): «Նոր փոխարքա Վորոնցով Դաշկովը «**մեծ հայասերի**» անուն էր վաստակել հայերի շրջանում» (Ա. Սահիյան, «Ծարավ»): «Յոհաննես Լեփսիուսով սկիզբ առավ այն **մեծ հայասերների** շարքը, որոնք ցեղասպանությանը հաջորդած տարիներին հայ ժողովրդին ցուցաբերած անմասնորոք և անշահախնդիր օգնության համար արժանացան հայ ժողովրդի անկեղծ սիրուն և համակրանքին» (Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը գերմանահայկական ընկերության 100-ամյակին նվիրված ակադեմիական սիմպոզիումի առիթով), «Մայքերին հրաժարվեց ընդունել բրիտանական **հայասերների** ներկայացուցիչներին Վեստմինստերի դուքսի գլխավորությամբ» (Ա. Կիրակոսյան, «Բրիտանական դիվանագիտությունը և արեւմտահայության խնդիրը») և այլն:

Մեծ հայասեր-ի նման հաճախադեպ չէ **ջերմ հայասեր** բառակապակցությունը: Օրինակներ՝ «Պոլ Դեշանելը՝ ֆրանսիական պարզամալորների պալատի նախագահը, **ջերմ հայասեր** է և սամեն մի միտինգում ճատեր

Քարեն Եփիեն արժանի էր այդ ամենին, քանի որ մինչև մահը նվիրված է եղել ցեղասպանությունից փրկված հայ գաղթականների օգնության գործին: Առաջին աշխարհամարտից հետո մեկնելով Հալեպ՝ զբաղվել է առևտնագված հայ կանանց և երեխաներին վերադարձնելու գործով: Նրան հաջողվել է մահմեդական գերությունից ազատել մոտ 2 հազար հայուհիների:

Հիրավի մեծ հայասեր, որին նվիրված առանձին բառահոդվածներ, ցավոք, կրկին չկան հայկական հանրագիտարաններում:

²⁸ Ահա լրագրային տեղեկատվության վերնագիր՝ «**Վախճանվեց մեծ հայասերը՝ Յիրմի Նոսելը**» («Ազգ», 15.03.2005): Չեխ նկարիչ Յիրմի Նոսելը 1965-ից սկսած՝ հայկական թեմատիկայով հարյուրավոր կտավներ է ստեղծել, զբաղվել հայկական մշակույթի բարոզչությամբ: Հարց է ծագում. որն է հայերի և Հայաստանի բարեկամ գործին, արվեստագետին կամ գիտնականին **մեծ հայասեր** կոչելու չափանիշը:

է արդասանում, թե հայերը Թուրքիայում անպարճառ ազատություն պիտի սրանան» (Լեո, «Անցյալից»): «Խարապահանջ եւ վերապահ իբրեւ գիրական, եղած է սակայն **ջերմ հայասեր** եւ մասնակցած ամէն տեսակ հայանպասար կազմակերպութիւններու» (<http://dictionnaires-machtotz.org>. խոսքն Անտուան Մեյեի մասին է - Դ.Գ.): Այս բառակապակցությունը կարող է **մեծ հայասեր**-ի «բերը թեթեւացնել»՝ նպաստելով **հայասեր**-ի կապակցելիության հնարավորությունների ընդլայնմանը: Անշուշտ, նաեւ օգտակար կլինի հայանպաստ գործունեության գնահատման, ինչպես եւ տարբերակման հարցում:

Նկատելի է, որ խոսքում **հայասեր** բառի հետ **և/ու** համադասական շաղկապներով կապվում է **մարդասեր**-ը կամ նրա օտար համարժեք **հումանիստ**-ը²⁹: Ընդ որում էական չէ, թե դրանցից ո՞րն է առաջինը դրվում: Հմնտ. «1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ մեծ **մարդասեր** եւ **հայասեր** Ալմա Յուհանսոնը շվեդական եկեղեցու միախոններ էր Արեւմտյան Հայաստանում» («Նոյան տապան», 12.07.2006): «Վերջինիս հարեանությունը են ամփոփված Շուրերյի, Բեթհովենի, Շյուբուտսի, Բրամսի, մեծ **հայասեր** եւ **հումանիստ** Ֆրանց Վերֆելի, Ավարիայի 7 նախագահների աճյունները» («Առավոտ», 25.11.2006): «.... գիտական քննության է ենթարկված եւ լուսարանված մեծ **հումանիստի** եւ **հայասերի**, նրա կողմից սրեղծված «Գերմանական առաքելություն Արեւելքում» ընկերության հայանվեր գործունեությունը» («Հայկական ժամանակ», 29.01.2003):

Հայասեր-ի եւ **մարդասեր**-ի սերտ առնչակցությունն առանձին բացատրության կարիք չունի, քանի որ հայասիրությունը հաճախ ուղղակի մարդասիրության ծնունդ է, նրա բնական եւ օրինաչափ մի դրսևորումը: Ահա խոսուն մի օրինակ՝ «Անիկա **մարդասեր** էր եւ չէր կարող **հայասեր** չլլալ....» (Վ. Թորոպենց, «Ալֆրեդ Տերմեն»): Այս պարագայում տրամաբանական է **կամ** շաղկապի գործածությունը եւս. «Երբեմն ի վեր **հայասեր** կամ **մարդասեր**»

²⁹ Հայկական հանրագիտարանները օտարազգի հայասեր գործիչներին ներկայացնելիս, որպես կանոն, գործածում են միայն **հումանիստ (մարդասեր)** բառը. **հայասեր**-ը չի հանդիպում: Այսպես, անկախության շրջանում հրատարակված «Հայկական հարց» հանրագիտարան (Երևան, 1996). «Վերֆել Ֆրանց Վիկտոր (1890-1945), ավարիացի գրող, **հումանիստ**» (էջ 435), «Նանսեն Ֆրիդրիխ (1861-1930), նորվեգացի գիտական, բնետախոյզ, օվկիանոսագետ, **հումանիստ**, հասարակական գործիչ» (էջ 353): Հայասերներից ոմանք ներկայացվում են իբրեւ միախոններ. «Լեւիսոն Յոհաննես (1858-1926), գերմանացի հասարակական գործիչ, միախոններ» (էջ 159), «Յակոբսեն Սարիա (1882-1960), դանիացի միախոններուի» (էջ 347): Այս մոտեցումը թերեւս որդեգրվել է ավելի վաղ հրատարակված «Հայկական սովետական հանրագիտարանի» ազդեցությամբ: Ուստի կարելի է եզրակացնել, որ **հայասեր**-ը հանրագիտարանային բառ չի դիտվել:

սեր դարձած եք» («Երեւան», 12.05.1947): Այս երկու բառերին առնչակից է *սյրասեր*-ը, չէ՞ որ օտարագգի հայասերն ի վերջո այլասեր է:

Ակներեւ է, որ ինչպես *մեծ հայասեր*, այնպես էլ *մարդասեր* և *հայասեր* կոչվող մարդիկ բացառապես օտարներ են: Բոլորովին պատահական չէ, որ *հայասեր*-ի հետ շարահյուսական կապի մեջ է մտնում «որեւէ տեղացի», «այս կամ այն ազգի ներկայացուցիչ» նշանակությամբ որեւէ բառ:

Նախադաս գործածության դեպքում *հայասեր*-ը ամական է, ինչպես՝ «*-Բանի եւ կամ, - ասել էր հայասեր ու քաջ հայախոս, մեծահոգի քուրդը, - մոկացի ոչ մի հայի քիթը չի արյունի...*» (Մ. Խերանյան, «Չայն տուր, ով ծովակ»)։ «*Այդքան հայասեր վրացու դեռ չէի հանդիպել*» («Ազգ», 22.12.2007): Հետադաս գործածության դեպքում *հայասեր*-ը գոյական է, ինչպես՝ «*Գիրքը ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է գերմանացի մեծ հայասերի գործունեությանը*» («Ազգ», 03.04.2006): «*Այսպիսին էր շվեյցարացի հայասերների պարմությունը*» («Ազգ», 01.09.2007):

Կամ էլ որեւէ տեղացի կամ որեւէ ազգի ներկայացուցիչ նշանակող բառը դրվում է *հայասեր*-ի վրա, եւ երկուսը միասին լրացնում են մեկ այլ բառի. «*...ներկայությամբ եւ հավանությամբ ամերիկացի հայասեր ծերակուրականներու եւ քարենկամներու*» («Երեւան», 06.06.1947):

Ինչպես տեսանք, *հայասեր* բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերել նաեւ գոյականի նշանակություն՝ դառնալով երկարժեք (թեպետ հայերենի բացատրական բառարանները դա չեն արձանագրել): Վերոբերյալ, ինչպես եւ այս խոսքաշարերում բառն աներկրա գոյականի արժեք ունի³⁰. «*Հայ մեծ քարերար եւ ազգային գործիչ Պողոս Նուպար փաշան հայրուկ շնորհակալություն հայտնեց մեծ հայասերին*» («Ազգ», 05.05.2006): «*... մեծ հայասերներ Յ. Լեւիսիուսի, Հ. Մորգենթաուի, Ֆ. Վերֆելի, Ֆ. Նանսենի եւ մյուսների հուշաքարերի բացումը թանգարանում*» («Ազգ», 17.05.2005):

Հայասեր-ը շատ հաճախ գործածվում է նաեւ օտար հայազետների պարագայում. հաճախադեպ է մասնավորապես *հայազեւր* և *հայասեր* կապակցությունը, ինչպես՝ «*«Նախահավերժի ծնունդը» հրապարակումը պարմում է լեհ հայազեւր ու հայասեր Բոգդան Գեմբարսկու եւ առ Հայաստանն ու Հայկական լեռնաշխարհը նրա սիրտ մնաին*» («Ազգ», 16.05.2007):

³⁰ Որոշ դեպքերում խոսքիմասային արժեքի շուրջ կարող է տարակարծություն լինել: Այսպես. «*Շիրակի ջրանցքի բացմանը հյուր եկած մեծ գիտնական ու հայասեր Ֆրիդրիխ Նանսենն ասել է, թե այն ժողովուրդը, որը կանգնած էր անհետանալու եւ ՊԱՏՄԱԿԸ ժողովուրդ դառնալու վրանցի առջեւ, ԱՅԺՄ ԶՐՈՒՄ է ԻՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԶ ԾԱՌԸ*» (Գ. Էմին, «Յոթ երգ Հայաստանի մասին»):

«Հաճախ էր հիշում հատկապես Մարկվարտին, որին անվանում էր *և՛ հայագետ, և՛ հայասեր*» (Ռ. Զարյան, «Հուշապատում»):

Ներկայումս, թվում է, թե հաղթահարվում է հայերիս մեջ արմատացած այն միամիտ պատկերացումը, որ եթե մի օտարազգի հայագետ է, ապա անպայման հայասեր պետք է լինի: Նույնիսկ մտայնություն կա, թե հայագետները լինում են երկու տեսակ՝ հայասեր եւ թրքասեր:

Իսկ այն դեպքում, երբ *հայասեր* բառով բնութագրվող մարդիկ հայեր են, հաճախ նրան նույն ձևով կապվում է *հայրենասեր*-ը, երկու շարադասությամբ էլ: Հանդես է գալիս գերազանցապես *ու* շաղկապը: Օրինակներ՝ «Այդ օտարասերները, նկատի ունեմ խանութպանները, պակաս *հայասեր ու հայրենասեր* չեն» («Երեկոյան Երեւան», 30.01.1996): «....որը պատիվ չի բերում *հայասեր ու հայրենասեր* ոչ մի հայ մարդու» («Իրավունք», 15.01.2003): «....նրա ինքնահաստատումը պահանջում է ակտիվ, լայնախոհ *հայրենասեր ու հայասեր* մարդկանց³¹» («Իրավունք», 10.09.2003):

Ուշագրավ է *հայասեր-ազգասեր* գուգադրումը (մերձիմաստ բառերի գուգադրումը սովորական է հայերենի բառակազմության մեջ): 1881-ին Երեւանում գաղտնի հիմնվել է «*Հայասեր-ազգասեր*» անունով հայրենասիրական խմբակցություն, որի անդամների նկատմամբ դատ է հարուցվել 1883-ին³²:

Կարելի է ասել, որ այդ շրջանից սկսած՝ *հայասեր*-ը քաղաքական խոսույթին բնորոշ միավոր է դարձել: Իսկ լիովին այդպիսին է դարձել հատկապես հայկական հարցի միջազգայնացումից եւ ԺԹ. դարավերջի հայկական զանգվածային կոտորածներից ու հատկապես 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունից հետո:

Վերոհիշյալ բառերը խոսքում հանդիպում են նաեւ ազատ կապակցությամբ. «*Եթե մենք իսկական ազգասերներ, հայասերներ կփնտրենք, ահա տքա են*» (Ռ. Պատկանյան, «Հուշեր»): «*Հայասրանի քաղաքական ուժերի հեղինակներն են հանդիպումներ են ունենում իրանական դեսպանատան աշխատակիցները՝ համոզելով մեր քաղաքական գործիչներին լինել ազգասեր եւ հայասեր*» (www.armtimes.com/hy/read/58710):

³¹ Պատկերը գրեթե նույնն է այստեղ. «....ինչ լավն են իրենք, ինչքան հոգալար են մեր հանդեպ, *հայրենասեր են անմասցորդ, իսկ հայասեր՝ ամբողջ էությանը*» («Ազգ», 30.03.2007):

³² Սա առաջին քաղաքական դատն է Երեւանում. անդամները մեղադրվել են պետական հանցագործության մեջ (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Երեւան, 1980, էջ 134 («Հայասեր-ազգասեր»), հ. 8, Երեւան, 1977, էջ 306 («Դատական գործ 1883»)):

Հայասիրության հատկանիշը «չափելի է», եւ *հայասեր*-ին լրացնում են չափ ցույց տվող բառեր՝ *չափազանց*, *շատ*, *սյոքաւն*: Այսպէս՝ «Այդ ինչպէս է, որ պարոն Ռուբենյանը, *սյոքաւն հայասեր* մարդ, համաձայնվել է օտար հարս քերել» (Ս. Կապուտիկյան, «Գույներ նույն խճանկարից»): «Նորընդիր պապը *շատ հայասեր* է, լավ գիտի մեր եկեղեցու պատմությունը եւ մեծ հարգանք ունի Հայ եկեղեցու, Սուրբ Էջմիածնի նկարմամբ» («Ազգ», 22.04.2005): «Նա սպրել է քարերը քաղաքներում եւ *չափազանց հայասեր*»³³ էր» («Բրավոնք», 12.02.2003):

Ուշագրավ մի իրողություն. այն խոսքաշարերում, որտեղ գործածված է *հայասեր*-ը, հայասեր բնութագրված մարդը, հայ լինի թե օտար, սովորաբար դրական հատկանիշներով է օժտված լինում: Հմնտ. «*ազնիվ եւ հայասեր երիտասարդ*» (Ռ. Պատկանյան, «Հուշեր»), «*առաքինի եւ հայասեր Շանշյանց*» (Պ. Պոռոյան, «Սկիզբն երկանց»), «*խիզախ մնալորականը, մարդասերն ու հայասերը*» («Ազգ», 22.07.2005):

Ի. դարում *հայասեր*-ը դարձել է տղամարդու անձնանուն³⁴, այսինքն՝ բառի ներկարգային տարարժեքություն է ձեւավորվել՝ հասարակ եւ հատուկ հակադրությամբ:

Հայասեր-ը ԺԹ. դարի 60-ականների հայկական մամուլում կիրառվել է նաեւ որպէս կեղծանուն՝ *Հայասեր* (Խորեն Ստեփանե) - «Հայկական աշխարհ» (Թիֆլիս), *Հայասեր գաղղիացի* - «Խնդիր միութեան Հայոց» (Փարիզ)³⁵:

Հայասեր բառի հականիշը, ինչպէս ասվեց, *հայապաց*-ն է³⁶, եւ նրանց հանդիպադրված գործածությունը նույն խոսքաշարում բնական է, թեպետ ոչ հաճախադէպ: Այսպէս. «Հոլովում էին եւրոպական այս կամ այն պելուկան գործչի անունը իբրեւ «*հայասերի*» կամ «*հայապացի*» » (Ա. Սահինյան, «Ծարավ»)³⁷: *Հայապաց* բառը, ի տարբերություն *հայասեր*-ի, անհա-

³³ «Չափազանց հայասեր» իմաստը դրսևորելու համար հայերենում ստեղծվել է *հայապաշար* բառը, որ հոմանիշ է *հայասեր*-ին (տե՛ս Ա. Մ. Սուրիապյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 582). նրան զիջում է հաճախականությամբ: Իմաստային այլ նրբերանգ ունի մյուս հոմանիշը՝ *հայամեծար*-ը:

³⁴ *Հայասեր* անունն ունեցողներից մեկը Արցախյան պատերազմի մասնակից Հայասեր Շահենի Հայրապետյանն է, որը գոհվել է 1992-ի սեպտեմբերի 7-ին Մոս գյուղի պաշտպանության ժամանակ (www.arlis.am): Արցախյան պատերազմում գոհվել են նաեւ Հայասեր Հակոբյանի Արամ եւ Համետ որդիները, Հայասեր Սուրենի Դալայանը, Հայասեր Սարոյի Ասրյանը (<http://hy.wikipedia.org>): Սա ուշադրության արժանի մի իրողություն է:

³⁵ Բ. Մ. Հովակիմյան, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 238:

³⁶ Ի դեպ, Մալխասյանցի բառարանը *հայասեր*-ի հականիշը տալիս է միեւնույն բառահոդվածում. հայասէր, ած. հայերին սիրող: Հկո. *հայատեաց* (հ. 3, էջ 37):

³⁷ Համանման երեւոյթ կարելի է նկատել նաեւ այստեղ. «Բ հակադրություն այդ *հայապաց*

մենատ ուշ է կազմվել. վկայված չէ գրաբարի եւ միջին հայերենի, ինչպես նաեւ աշխարհարարի առաջին բառարաններում: Ըստ մեր ունեցած տվյալների՝ *հայարենաց*-ի բառարանային առաջին գրանցումը վերաբերում է ԺԹ. դարի վերջին³⁸, ընդ որում՝ երկու արժեքով՝ անականի (армянофобскій) եւ գոյականի (армянофобъ³⁹): Այնուհետեւ բառը տեսնում ենք նաեւ այլ բառարաններում⁴⁰:

Բնական է, որ թարգմանական վերոհիշյալ բառարանում գրանցվելուց առաջ բառը գործածվելիս է եղել: Մեզ հանդիպած ամենավաղ վկայությունը 1863-ից է. «Աղասի', Աղասի', գլխովդ պարուր գնաւ, քանի քանի անգամ քո քաջ ընկերներովդ կամենում էիր հանկարծ գալ հարձակվել Երեւանու բերդի վերա, արենկեր Հասան խանին, *հայարյաց Սարդարին քո քաջ բազկին, քո անսխալելի սրին գոհ անել...*»: Սա Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պոմեով գրված «Աղասի» դրամատիկական երկից է, հեղինակը՝ Պ. Պողոյան: 1863-ին բեմադրվել է Թիֆլիսում, հրատարակվել «Կոունկ Հայոց աշխարհին» ամսագրում, ապա՝ առանձին գրքով⁴¹: Անշուշտ, հնարավոր է, որ հետագայում հայ մամուլի էջերում բառի ավելի վաղ գործածություն գտնվի:

Բառակազմորեն *հայարյաց*-ն առնչվում է Ե. դարի հայերենի բառակազմությանը: Կազմվել է «արմատ+հոդակապ+քերականորեն ձեւավորված բայական բաղադրիչ» կաղապարով, ինչպիսիք են՝ *ամենինաց, ասարուածասաց, ասարուածուրաց, արագրնթաց, թոնրնկեց, խղեփեաց, կիսայրեաց*⁴²: Սրանց երկրորդ բաղադրիչները համընկնում է անցյալ կատարյալի ցոյական հիմքին: Մեզ հետաքրքրող *-արենաց* բաղադրիչով ունենք գրաբարյան *աղբարարարենաց, ասարուածարենաց, քրիարուարենաց, օրարարենաց* եւ այլ բառեր:

վերաբերմունքի, ազգությամբ շուրանդացի Փիթրը Քսուն խիստ հայասիրական գործունեություն է ծավալել Միացյալ Նահանգների հայկական գաղթօջախներում» («Առավոտ», 09.12.2002):

³⁸ Տե՛ս Կ. Եղորեան, Հայերէն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 221: Այստեղ գրանցված է նաեւ *հայարեցութիւն*-ը: Այս վերջինս այժմ հանդես է գալիս նաեւ անհնչյունափոխ տարբերակով՝ *հայարյացություն* (տե՛ս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երեւան, 1974, էջ 282):

³⁹ Այժմ ընդունված են *հայասեր* եւ *հայապյաց* բառերի ռուսերէն *арменофил, арменофоб* համարժեքները (տե՛ս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայ-ռուսերէն բառարան, Երեւան, 1987, էջ 387, 388):

⁴⁰ Տե՛ս, օրինակ, Յ. Դադրաշեան, Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Թիֆլիս, 1911, էջ 425 (այստեղ եւս բառը երկարժեք է) եւ այլն:

⁴¹ Պ. Պողոյան, Երկերի ժողովածու 7 հատորով, հ. 1, Երեւան, 1962, էջ 453-454:

⁴² Հմմտ. Լ. Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 121:

Թեև *հայարյաց* բառի առաջացումը վերաբերում է նոր ժամանակներին, հայատյացության երևույթը, ինչպես վկայում է հայոց պատմությունը, եղել է շատ վաղուց⁴³:

Ստ. Մալխասյանցից սկսած՝ հայերենի ընդարձակ բառարանները *հայարյաց*-ը բացատրում են միայն հատկանշային նշանակությամբ՝ «հայերին ատող»:

Հայասեր-ի նման՝ *հայարյաց* բառը կապակցվում է ինչպես անձնանիշ (հատուկ եւ հասարակ), այնպես էլ իրանիշ գոյականների՝ *հայարյաց գործիչ, պարզամտություն, դեսպան, տականք, թափափուկ* եւ այլն, *հայարյաց քաղաքականություն, քարոզչություն, թերթ, հայտարարություն, հրապարակում, գրառում* եւ այլն: Բնագրային օրինակներ՝ «Տղայիս կմկմոցիցը եւ հասկացա, որ *հայարյաց* պատալը խիստ կծու պարասխաններ է տվել եւ, ինչպես երևում էր, Մովսեսիս ազգությունին է դիպել» (Պ. Պոռչյան, «Շահեն»): «Եւ ո՛վ, այդ վաղեմի *հայարյաց* Սյրայի՛նը պիտի հոգար Հայաստանի համար» (Կ. Սուրենյանց, «Ճիշտը կյանքն է»): «Աղբրեջանում ամենաբարձր մակարդակով ուղմամբնե՛նք եւ *հայարյաց* հայտարարություններ են արվում» («Հայկական ժամանակ», 18.08.2005):

Բառի գործածությունները վկայում են, որ հայատյաց կոչվածների զգալի մասը թուրք է⁴⁴ կամ աղբրեջանցի, հանդիպում են նաեւ ռուս, վրացի եւ այլք: Այսպես՝ «Բայց իրեն յաջորդեց ա՛լ ատելի *հայարենաց* մէկը, ընդհանուր դատաստացի օգնական *Ճէմալ քէկը*» («Մշակ», 10.03.1884): «.... կցած են այդ յուշերուն Ճէմալ փաշայի յուշերու մէջէն *հայարենաց* ռուս գնդապետի մը՝ Թվերքէիլէպոֆի ձարոտութիւնը...» («Յառաջ», 10.10.1967): «Բարբիւմ շարդարարները մեծ վնասներ հասցրին հայությանը, որովհետեւ իրենց կողմն էր *հայարյաց* գեներալ-սահանգապետ *Նակաշիճեն*» («Ազգ», 22.04.2006): «Հոգեվարք սպրոդ Խորհրդային Միությունը Ղարաբաղում եւ հարակից տարածքներում «երաշխավորի» պարտավորությունները հանձնեց *հայարյաց Պոլյանիչկոյի* գթասրտությանը» («Ազգ», 25.08.2006):

⁴³ Հմմտ. «Ականավոր շար պարմաքաններ սելջուկյան ավերիչ արշավանքների ու առաջ-խաղացման նախօրյակին Բյուզանդիայի կառավարող շրջանների եւ կայսրության պաշտոնական եկեղեցու այդ *հայարյաց* քաղաքականությունը իրավացիորեն համարում են անհեռաբան ու վնասակար» (Թ. Հակոբյան, «Անի մայրաքաղաքը»): Փաստորեն կար երևույթը, որը բառային ձևավորում շատ ավելի ուշ՝ դարեր անց, ստացավ:

⁴⁴ Հատկանշական է, որ խոսքի մեջ թուրքը հայատյացության առումով համեմատության եզր է դառնում: Այսպես՝ «Թուրք պաշտոնյաների ներկայությամբ Մեհմեդ Էֆենդին իրեն ձեռացնում էր մոլեռանդ մահմեդական եւ շար ավելի *հայարյաց*, քան թուրքը» (Խ. Դաշտենց, «Ռանչապարների կանչը»):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թուրքերի հայատյացության մասին ազատորեն գրում էին արևելահայ մամուլում, ոռոսների հայատյացության մասին՝ սփյուռքում (երբ Հայաստանում խորհրդային իշխանություն էր): Հստակ է, որ բառի գործածությունն առնչվում է քաղաքականությանը եւ կապված է քաղաքական իրադրությանը, հանգամանքներին: Հայաստանի անկախության շրջանում բառի գործածության նման վերապահումներ, սահմանափակում եւ զգուշավորություն այլեւս չկան: Սփյուռքում պատկերն այլ է, նայած թե որ երկրի հայ համայնքին է առնչվում:

Ջարմանալի է, սակայն հայատյացների մեջ հանդիպում են նաեւ հայեր: Դրանք ազգային ինքնությունից հեռացած կամ ազգային շահերը անձնականին ստորադասած մարդիկ են: Այսպես՝ «*Ինչ եղան ազնվահոգի Կարյան, թեթևամիտ Սոֆիան, հայադյաց Ասարուր աղան եւ անբարոյական Դոդդոյովը*» (Ռ. Պատկանյան, «Տիկին եւ նաժիշտ»): «*Անմիջապես հիշեց այս անուն-ազգանունըազգությամբ հայ հայադյաց մի հրեշ, դավաճան....*» (Ալ. Թոփչյան, «Եւ անգամ մահից հետո»):

Հայատյաց կարող է անվանվել նաեւ պետությունը, ինչպես որ *հայասեր*-ի պարագայում տեսանք: Ըստ բնագրային վկայությունների (այդպես է նաեւ իրականում)՝ հայատյաց են կոչվում երկու պետություն՝ Թուրքիա եւ Ադրբեջան. «*Թուրքիա պետությունը հայադյաց պետություն է*» (www.newsinfo.am): «*...Ուկրաինայի դրոշի տակ կարողացել է թափանցել հայադյաց տերություն ու բարձրացել Արարարի գագաթը*» («Ազգ», 09.04.2005): «*Արցախի ժողովուրդը երբեք չի կարող սպրել հայադյաց Ադրբեջանի կազմում*» (www.panarmenian.net/arm/news/122087):

Նման եզրակացության կարող ենք հանգել նաեւ այն դեպքերում, երբ *հայադյաց քաղաքականություն* բառակապակցությունը գործածվում է որեւէ երկրի կամ վարչակազմի առնչությամբ, ինչպես՝ «*Հրանսր Դինքին սպանող հանցագործը Թուրքիայի ղեկավարությունն է՝ իր վարած բացահայտ հայադյաց քաղաքականության.... համար*» («Ազգ», 26.01. 2007): «*Ընդդեմ Ադրբեջանի հայադյաց քաղաքականության*» (գրքի վերնագիր է. Երեւան, 2007): «*Նիկոլայ Երկրորդի հայադյաց քաղաքականությունը եւ հայերի դատը Ս. Պետրերբուրգում*» (www.hayagitaran.info/2014/11): «*Վրաստանի իշխանությունների հայադյաց քաղաքականությունը դրսևորվում է բացառապես բոլոր ոլորտներում*» (www.lragir.am/index/arm/0/politics/home/42364): Թեպետ որոշ դեպքերում նման գործածությունը կարող է սուրյեկտիվ լինել: Հարկ է նաեւ հաշվի առնել, որ հայատյացության դրսևո-

րումներ կարող են եղած լինել որևէ երկրի պատմության տարբեր ժամանակաշրջաններում, այս կամ այն իշխանության օրոք:

Հայապոյաց բառը հաճախ ունենում է լրացումներ, որոնք ցույց են տալիս այդ հատկանիշի աստիճանը: Այսպես՝ «*Պոլսից նոր ժամանած մոլի հայապոյաց* եւ արյունոտուշոր ոստիկանապետը շուրով հուսահատության հասավ»: «Այդ մականվանը արժանացել էր նա իր *հույժ հայապոյաց* եւ դժնարար գործունեության ընթացում» (Մ. Խերանյան, «Չայն տուր, ով ծովակ»): «.... նա հայրնի է իր թրքասիրությամբ, իսկ Սարիղամիշի պարտությունից հետո դարձել է *կալաղի հայապոյաց*⁴⁵»: «Ես լավ գիտեմ դրան, իմ ուսանողն է եղել, իսկ հիմա «Իթթիհաթի» եռանդուն գործիչներից մեկն է, *սուկալի հայապոյաց*» (Ալ. Թոփչյան, «Եւ անգամ մահից հետո»): «1915-ի սկզբներին Վանի *մոլեռանդ հայապոյաց* կառավարիչ Ջևդեթ փաշան՝ Էնվերի ազգականը, սարսափի իշխանություն էր հաստատել շրջանում» («Ազգ», 12.06.2004):

Կապակցվող բառը միաժամանակ կարող է մատնանշել հայապոյաց լինելու հաստատականությունը. «Այո՛, թուրքերի եւ ազեր-թուրքերի, այդ *երդվյալ հայապոյացների....*» (Մ. Սարգսյան, «Դարավերջի հայր»): Կամ՝

Եւ արդ՝ չուզելով եւ ակամայից՝
Ուխտյալ հայապոյաց այդ Գոլիցինը
Մինչեւ իսկ արդեն ոռոսացած հայից
Մոլի հայ սարքեց: (Պ. Սևակ, «Անլուելի գանգակատուն»)

Հայապոյաց բառին երբեմն զուգադրվում են հոմանիշ *հակահայ* եւ *հակահայկական* բառերը. «Գրքում ներկայացվում են նաև Բաքվում տիրող *հակահայկական՝ հայապոյաց* փրամադրությունները» («Ազգ», 22.07.2006): «Հեղինակը իրավացիորեն անդրադառնում է այժմյան թուրք պարմագրության *հայապոյաց-հակահայկական դերին*» (Կ. Մուսայելյան, «Տասներկու ճանապարհորդություն դարերի խորքը»):

Բնական պիտի համարել այն, որ խոսքում *հայապոյաց* բառով բնութագրվողները՝ մարդիկ եւ հանրույթներ, ներկայանում են բացասական

⁴⁵ Միեւնույն խոսքաշարում *հայապոյաց* կամ *հայապոյացություն* բառերի հետ երբեմն գործածվում են *թուրքասեր, թուրքամեք* կամ *թուրքասիրություն* բառերը, այսինքն՝ եթե հայապոյաց է, ուրեմն թուրքասեր է: Հմնտ. «....*թուրքամեք* եւ *հայապոյաց* Սրայինը իր հայրական ծանր ձեռքերով դանդաղաբար սուրը մեր գլխին չպահեք....» (Մ. Սարգսյան, «Դարավերջի հայր»): «....*անհեթեթ* են այն ձեռակերպումները, թե աշխարհը միավորվել է մեր դեմ, բաժանվել է *թուրքասերների, հայապոյացների*» («Առավոտ», 18.02.2005):

այլ հատկանիշներով են: Օրինակ՝ «Հայտնի պրովոկատոր և կատաղի հայադրյալ Գլերովն էր: Վաղուց էի ճանաչում այդ զագրելի տիպին, որի ճակնդեղի պես կարմիր երեսը և լկտի աչքերը միայն բավական էին գուշակելու համար, թե ինչ գարշելի հոգի է նստած նրա մեջ» (Շիրվանզադե, «Կյանքի բովից»): Այդպես էլ՝ «Ճիշտ է, Ջեդերը չար է, հայադրյալ» (Գ. Մահարի, «Այրվող այգեստաններ»): «Կառավարությունը հրահրում էր նրանց ավազակաբարո թնազդները, հայադրյալ կրքերը» (Ծ. Թորգոմյան, «Ալեմուփ սրտեր») և այլն:

Հայադրյալ-ին խոսքում կարող է գուգադրվել այլատյացություն նշանակող մեկ այլ բառ, ինչպես՝ «...մյուսը կարող է *հայադրյալ* կամ *աղորեջանադրյալ* լինել, որովհետև գրկվել է սեփական տնից» («Ազգ», 17.06.2006): «Ռոգոզինին իրոք կարելի է համարել *կովկասադրյալ*⁴⁶.... Սակայն տեղին չի լինի նրան անվանել *հայադրյալ*» («Ազգ», 17.06.2006):

Հայադրյալ բառի գործածության ոլորտներն են, ինչպես վերոհիշյալ օրինակներն են հուշում, մամուլ, հրապարակախոսություն, գեղարվեստական և գիտական գրականություն⁴⁷: Լայնորեն կիրառվում է քաղաքական խոսույթում:

Հայադրյալ-ին հակադրվում է ժխտական բառ-մասնիկով կազմված *ոչ հայադրյալ* բաղադրությունը՝ «Վրացիները *ոչ հայադրյալ* քաղաքականություն են վարում» (<http://hetq.am/arm/print/19007>): Ոչ հայատյացին անշուշտ հայասեր չի կարելի համարել, սա առերևույթ չեզոք վերաբերմունք ունեցողն է. հայերի նկատմամբ ջերմ չէ, բայց նրան թշնամի համարելն էլ ճիշտ չէ: Թեպետ բառի կազմում առկա *-ադրյալ* բաղադրիչն ակամա հակում է բացասական վերաբերմունքի կողմը:

Եւ, վերջապես, *հայասեր - մարդասեր*-ի նման գուգահեռներ կարելի է անցկացնել՝ *հայադրյալ - մարդադրյալ*: Եթե առաջին բառազույգն առնչվում է հումանիզմի՝ մարդասիրության հետ, ապա երկրորդը՝ ֆաշիզմի:

Դժբախտաբար, հայոց պատմության ընթացքն այնպիսին եղավ, որ *հայադրյալ*-ի կողքին ավելացան սահմոկեցուցիչ իրականության թելադ-

⁴⁶ *Աղորեջանադրյալ* և *կովկասադրյալ* բառերը համեմատաբար նոր են:

⁴⁷ Ի տարբերություն *հայասեր*-ի՝ *հայադրյալ*-ը «հանրագիտարանային» բառամիավոր է: Այսպես՝ «Հայկական սովետական հանրագիտարան». «Նրանց *հայադրյալ* մոլուցքն ավելի է սաստկանում, երբ սրանում են առաջին հարվածները ռուսական բանակից» (հ. 7), «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Վանի *հայադրյալ* Ջեդերն առաջին հարվածն ուղղեց շարախցիների դեմ» (հ. 8): «1922-ին հրապարակված «Ճիշ Արարարից» գրքույկում ներկայացնելով Զմյուռնիայի կոլորադները՝ Ա. Վեգները դարձյալ մերկացրել է Թուրքիայի կառավարող շրջանների *հայադրյալ* քաղաքականությունը և արեւմտյան տերությունների անարարբերությունը» (հ. 11) և այլն:

րանքով ստեղծված բառեր՝ *հայակեր, հայակործան, հայասպան* եւ այլն: Այդ բառերը ծնունդ առան հայատյացության զարհուրելի դրսևորումներն անվանելու համար:

Ամփոփենք:

1. Հայերի նկատմամբ դրական վերաբերմունք արտահայտող բառերի իմաստային դաշտում միջուկային միավոր է *հայասեր*-ը, բացասական վերաբերմունք արտահայտողների մեջ՝ *հայապոյաց*-ը:

2. *Հայասեր* եւ *հայապոյաց* բառերով հայերը բնութագրում են իրենց բարեկամներին եւ թշամիներին՝ անհատներից սկսած մինչեւ պետություններ:

3. *Հայասեր*-ն առաջին անգամ վկայվել է ԺԳ. դարում՝ Վարդան Արեւելցու «Հաւաքումն պատմութեան» («Տիեզերական պատմութիւն») երկում, *հայապոյաց*-ը՝ ամենայն հավանականությամբ՝ ԺԹ. դարի կեսերին:

4. Բառակազմորեն *հայասեր* եւ *հայապոյաց* բառերը դասական հայերենի բառակազմական հիմնակադապարների իրացումներ են, որոնց առաջացման ժամանակ որոշակի դեր է խաղացել նմանակության (համաբանության) օրենքը:

5. *Հայասեր*-ը ածական է («հայերին սիրող, հայերի նկատմամբ լավ վերաբերմունք ունեցող» նշանակությամբ), որը ժամանակի ընթացքում ձեռք է բերել գոյականի արժեք՝ «հայերին սիրող, հայերի նկատմամբ լավ վերաբերմունք ունեցող մարդ» նշանակությամբ: *Հայապոյաց*-ը գերազանցապես ածականի արժեք ունի:

6. *Հայասեր*-ը եւ *հայապոյաց*-ը գործածում են առավելաբար օտարագգի մարդկանց կապակցությամբ, *հայասեր*-ը՝ շատ հաճախ երոպացիների եւ ամերիկացիների, *հայապոյաց*-ը՝ առավելաբար թուրքերի եւ ադրբեջանցիների: Ռուսների եւ վրացիների կապակցությամբ գործածվում են երկուսն էլ:

7. *Հայասեր*-ը դրսևորում է կապակցելիության առանձնահատկություններ. նրա հետ հաճախ գործածվում է *մեծ* ածականը (չափ նշանակող այլ բառեր), ինչպես նաեւ որեւէ տեղացի կամ ազգություն նշանակող բառեր, գոյգաղրվում են *մարդասեր/հումանիստ* եւ *հայրենասեր/ազգասեր* բառերը:

8. Չակերտներում, ինչպես եւ *կարադի* կամ *հույժ* բառերի հետ գործածված *հայասեր*-ն արտահայտում է «կեղծ», նաեւ «հայատյաց» իմաստները, հեգնական կամ անարգական երանգներ: Իսկ *հայապոյաց*-ը սովորաբար

կապակցվում է այդ հատկանիշը ցույց տվող (որպես կանոն՝ ուժգնացնող) բառերի հետ, ինչպես՝ *կարադի, հույժ, մոլեռանդ, սուկալի* և այլն:

9. *Հայասեր*-ը հանդես է գալիս հատուկ և հասարակ անունների արժեքներով:

10. *Հայասեր*-ը և *հայադյաց*-ը հրապարակախոսական և գեղարվեստական ոճերին բնորոշ բառեր լինելուց զատ հայերեն քաղաքական խոսույթի միավորներ են, հանդիպում են գիտական ոճում ևս:

РЕЗЮМЕ

Есть ряд армянских слов, которые отражают положительное или отрицательное отношение чужих к армянам. Среди них центральное место занимают слова **հայասեր** “арменофил” и **հայատյաց** “арменофоб”.

В статье рассматриваются модели образования и время создания исследуемых слов (**հայասեր** “арменофил” - XIII в., **հայատյաց** “арменофоб” - XIX в.), а также их семантика, морфологические значения, особенности сочетаемости и употребления, стилистическая значимость и лексикографическая обработка.

SUMMARY

There is a series of Armenian words that reflect the positive or negative attitude of foreigners towards Armenians. Among those the central place is occupied by the words **հայասեր** “armenophile” and **հայատյաց** “armenophobe”.

In the article the models and the time of the formation of the researched words (**հայասեր** “armenophile” - 13th century, **հայատյաց** “armenophobe” - 19th century) are being examined, as well as their semantics, features of compatibility and usage, morphological and stylistic values and description in dictionaries.

